

Ա.Յ. ԿԱԶԱՐՅԱՆ

ПРОИСХОЖДЕНИЕ АРМЯНСКИХ, РУССКИХ И АНГЛИЙСКИХ ИСКОННЫХ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ

Рассматриваются источники исконных армянских, русских и английских фразеологизмов с компонентами частей тела. Показаны стадии образования указанных единиц. Указано также, что по происхождению эти фразеологические единицы в рассматриваемых языках могут быть классифицированы в следующие группы: 1) единицы, исходящие из народно-физиологических интерпретаций; 2) единицы, исходящие из фольклора и разных литературных источников; 3) единицы, исходящие из национальных обычаев, традиций и поверий.

Ключевые слова: исконная фразеологическая единица, языковое мышление, стадии формирования, источник.

ՀՏԴ 81'364.2

Լ.ՈՒ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ «ԾԱՌԵՐԸ» ԺՈՂՈՎԱԾՈՒՌԻՄ

Քննվում են «Ծառերը» ժողովածուում առկա դարձվածային նորակազմությունները (դարձվածքներ, դարձվածային կապակցություններ ու արտահայտություններ), որոնք կազմված են խոսակցական և գեղարվեստական ոճում հայտնի դարձվածքների հենքով՝ նմանողության, հականշության և հոմանշության սկզբունքով:

Առանցքային բառեր. դարձվածք, նորակազմություն, խոսակցական ոճ, բարբառ, գեղարվեստական ոճ, դարձվածային հոմանիշ, դարձվածային հականիշ, դարձվածային նմանություն:

Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործությունը գրականագիտական շրջանակներում եղել է բանավեճերի առարկա: Իսկ «... վեճ կարող են առաջացնել գրականության համար այնքան էական, բայց սկզբնապես անսովոր երկերը, որոնց մեջ կարելի է տեսնել գրական նոր մտածողության և ոճի նշաններ» [1]: Հ. Մաթևոսյանի անսովոր լեզվամտածողությունը, բարդ ոճը, լեզվական ավանդույթների շրջանցման իրողությունը, հեղինակային խոսքի ոճական մերձեցումը կամ գրեթե միաձուլումը հերոսների խոսքին, գրական երկի լեզվի գերհագեցումը ժողովրդախոսակցական բառապաշարով. - այս ամենը չէին կարող անտարբեր թողնել նաև լեզվաբաններին:

Հիրավի, ամեն մի լեզվական նորույթ ինքնահաստատման դժվարին ճանապարհ է անցնում: Այն նախապես մտնում է լեզվամտածողության հնոց, բազմաթիվ

տարափոխություններից հետո թրծվում և գրող արվեստագետի գրչի տակ գեղագիտորեն մշակվելուց հետո միայն ներկայանում է որպես լեզվական իրողություն:

Հ. Մաթևոսյանն այն եզակի գրողներից է, որն ստանձնել էր ժողովրդական բառն ու բանը որպես լեզվական իրողություն մատուցելու դժվարին առաքելությունը: Նրա ստեղծագործությանը հատկանշական է մտքի արտահայտման խիստ ազգային ձևը, որի մեջ որպես խոսքային շինանյութ հիմնական դեր են խաղում նաև դարձվածքները և դարձվածային կապակցություններն ու արտահայտությունները: Դրանց բազմաբնույթ կիրառությունը՝ որպես կենդանի խոսքի արտահայտչականությունը գրական երկին փոխանցելու հիմնական միջոց, նրա ստեղծագործությանը հաղորդում է բացառիկ ինքնատիպություն:

Այս առումով առանձնահատուկ տեղ է գրավում «Ծառերը» ժողովածուն, որում ներառված երկերի թեմատիկ բազմազանությունը հնարավորություն է տալիս նկատելու, որ Հ. Մաթևոսյանի կողմից դարձվածքների և հատկապես դարձվածային նորակազմությունների օգտագործումն ինքնանպատակ չէ, այլ խորապես համահունչ է թեմային:

«Լեզվական նորամուծությունների գոյացումը, մանավանդ բառապաշարի և դարձվածների ասպարեզում, հար և նման է ժողովրդական բանահյուսության ստեղծմանը. նրանք ևս, վերջինիս նման, ծագումով անհատական են, մշակումով հավաքական» [2]: Դարձվածային նորակազմությունները գեղարվեստական գրականության շնորհիվ ուղղակիորեն կամ անհատական մշակմամբ մուտք են գործում գրական լեզու: Ի տարբերություն բառային նորակազմությունների՝ դրանք ունեն ձևավորման և ծավալման ավելի լայն հնարավորություններ, քանի որ բարբառային և բանավոր խոսակցական բառաշերտերը դառնում են դարձվածային տարբերակների ստեղծման անսպառ աղբյուր: Բացի դրանից, գրողն ինքը առաջադրում է իր հեղինակային նորակազմությունները, որոնք, ընթերցողների լայն շրջանում քննություն բռնելով, կարող են մտնել համագործածական բառաշերտ կամ գրական լեզու: Այս դեպքում նորակազմությունների գործընթացը կազմում է *խոսակցական լեզու – գեղարվեստական գրականություն – գրական լեզու* հարաբերությամբ փակ շղթա, որտեղ անհատականն ու հավաքականը սերտորեն փոխկապակցված են:

Հրանտ Մաթևոսյանի «Ծառերը» ժողովածուն հարուստ է նորակազմությունների տեսականիով, որն ունի թե՛ հեղինակային կազմություններ, թե՛ ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ բառերի մշակումներ: Բանավոր խոսակցական լեզվի դարձվածքները մաթևոսյանական գրչի տակ դարձել են ազգային մտածողության, հոգեբանության արտահայտման բացառիկ միջոց: Խոսակցական բառաշերտի բազմաալան կիրառությունը ներդաշնակ է գրողի՝ գեղարվեստական խոսքը ժողովրդական լեզվամտածողությանը հարազատ եղանակներով հարստացնելու հավատամքին: Այդ իմաստով առանձին տեղ են զբաղեցնում բարբառային շերտից վերցված

դարձվածքները, որոնք, համադրվելով խոսակցականի ավելի ընդհանրական ձևերին, ծնունդ են տվել դարձվածային նոր տարբերակների կամ նորակազմությունների:

Դարձվածային նորակազմությունների այն տեսակները, որոնց ձևախմբաստային կառուցի համար գործածվել են փոփոխված բաղադրիչներով այլ դարձվածքներ, պայմանականորեն անվանենք **տարբերակային նորակազմություններ**:

Ժողովածուում հանդիպում են տարբերակային դարձվածքներ, որոնք կազմված են այլ դարձվածքների ձևային **նմանողությամբ**՝ այս կամ այն բաղադրիչը փոխելով: Դարձվածքը ձեռք է բերել նոր իմաստ: Օրինակ.

Աչքերից ժանգաջուր կաթել [3, (267)] = չար, թունոտ, նախանձախառն հայացքով նայել // նմ.՝ **աչքերից արյուն կաթել** (մարդասպանի խարանը հայացքում կրել): **Ցեղը թաղել** (352) // նմ.՝ **արևը / գլուխը / որևէ մեկին թաղել**: **Մեղրամառ անել** (394) // նմ.՝ **մեղրամիս անել**: **Համաշխարհային մեծ խառնակություն** (320) // նմ.՝ **բաբելոնյան խառնակություն** (քաոսային, խառնիճադանջ վիճակ): **Ունքերը ճակարին խաղացնել** (435) // նմ.՝ **ունքերը ճակարին թոցնել** (զարմանալ): **Ընդունելի լինի մաքաղի գառան քո վիզը** (324) // նմ.՝ **ընդունելի լինի մաքաղը** (պաշտամունքային արտահայտություն):

Կան տարբերակային նորակազմություններ, որոնց բաղադրիչները փոխված են, սակայն դրանք **հոմանշային** կապի մեջ են «մայր» դարձվածքի հետ:

Ծիծաղն իմ սրտին դանակ է դառնում (431) // հոմ.՝ **հանաքը դարձավ դանակ**: **Բան չէր ասի, թուքը կուլ կտար և կփնչացներ ծուռ ժպտալով** (277) // հոմ.՝ **վիրավորանքը կուլ տալ**: **Հարսը եթե մարդորդի էլավ, Արմենակը մերն էլ է...** (342) // հոմ.՝ **մարդ լինել, հալալ կաթնակեր լինել**: **Ծնողների վրա հոգսուհոգեհաց դառնալ** (76) // հոմ.՝ **հոգս դառնալ**: **Անարդարության ոտները կարճ են** (216) // հոմ.՝ **սրի ոտները կարճ են**:

Ժողովածուում հանդիպում են նաև տարբերակային նորակազմություններ, որոնց բաղադրիչները փոխված են՝ ըստ «մայր» դարձվածքի հետ **հականշային** հարաբերության: Օրինակ.

Սանձերը պինդ բռնել (54) // հակ.՝ **սանձերը բաց թողնել**: **Մաքրել անունը** (377) // հակ.՝ **մրոտել անունը**: **Շունչը թեթև** (53) // հակ.՝ **շունչը ծանր**: **Բոբիկանալ ջրին հասնելուց հեկո** (378) // հակ.՝ **ջուրը չտեսած ոտքերը հանել**:

Նշված նորակազմությունները կառուցված են եղած դարձվածքների հենքի վրա՝ ելնելով նյութի շարադրանքից, կերպարների ոճական երանգավորման և այլ նպատակներից: Դրանց շարքում կան տարբերակներ, որոնցով հեղինակը փորձում է բարբառային խոսքի որոշ ձևեր ներմուծել գրական լեզու: Դժվար է ասել՝ այդ փորձը միշտ է հաջողված, թե՞ ոչ: Թվենք մի քանի օրինակներ:

Պեժն աչքը կոխեիր, ... աչքը չէր ճպի (433): **Ո՞ր խեղճի գլխին է տրաքելու** (447): **Այ տակոռապոկ լինի քո լեզուն** (393): **Մաուզերի ռեխը տված** (438): **Իշխանը**

բացի-բացի էր անում (438): Սեպերդ ինչի՞ ես բաց արել (426): Գելերոց / տերտերոց / ձկներոց լինել: Խելքները շաղած (308): Ճղեց անցավ (160):

Սովորաբար կերպարների խոսքի ոճավորման նպատակով արված բարբառային չափավոր ներմուծումները գեղարվեստորեն արդարացվում են: Սակայն նույնը չի կարելի ասել հեղինակային խոսքի մասին (չնայած այստեղ ևս կարող է լինել արդարացնող հանգամանք. ժողովածուում երբեմն հեղինակային խոսքը պայմանական բնույթ է կրում՝ հեղինակին ևս ներկայացնելով կերպարային որոշակի գունավորմամբ):

Նույնը կարելի է ասել հասարակաբանությունների մասին, որոնցով առատ է ժողովածուն (*քու ծնողը, ես քո... հորդ գլուխը... և այլն*): Բանն այն է, որ նատուրալիստական արտահայտչամիջոցների օգտագործման միտումը արվեստի և գրականության մեջ (որը ծայրահեղորեն ակտիվացավ արդի շրջանում) արդեն սաղմնավորվել էր 20-րդ դարի 70-80-ական թվականներին: Թերևս դա նպատակ ուներ արվեստը դարձնել ավելի գունեղ ու կենդանի, Լյանքին ավելի ներդաշնակ: Սակայն, ըստ էության, դրանից տուժում է արվեստի, տվյալ դեպքում գեղարվեստական խոսքի գեղագիտական արժեքը, որի համար չափազանց կարևոր է չափի զգացումը:

Հ. Մաթևոսյանի գեղարվեստական խոսքը հարուստ է ոչ միայն բարբառային և խոսակցական լեզուների հենքով կառուցված դարձվածային նոր ձևերով, այլև **անհատական** կամ **հեղինակային** նորակազմություններով, որոնց շնորհիվ «գրողը կարողանում է ավելի համոզիչ ու կոնկրետ դարձնել խոսքը, ... ճշգրտորեն արտահայտել իր մտքերն ու դատողությունները, առանձին հասկացությունների համար ստեղծել համապատասխան բառաձևեր, որոնք մինչ այդ չեն եղել» [4]:

«Ծառերի» հեղինակային նորակազմությունները (դարձվածքներ, դարձվածային կապակցություններ ու արտահայտություններ) ոճական առումով կարելի է ներկայացնել 2 խմբով՝ **ժողովրդական մտածողությանը ներդաշնակ կառույցներ** և **գրքային կառույցներ**:

Առաջին խմբի դարձվածքների ճնշող մեծամասնությունը, որը գործածված է հերոսների խոսքում կամ հեղինակային խոսքի համապատասխան մասերում, նպատակ ունի գրական լեզուն հարստացնել ժողովրդախոսակցական լեզվի ոճախմաստային նրբերանգներով:

Թրջած կավ (446). **հանդի ծառ, այգու խրվիլակ** (443). **ազգուրակը, ողջուսարկածը խառնել իրար** (442). **մահը բուկը բռնել** (249). **թները կրակել** (393). **անկարգ ուրել, ազադ ման գալ** (283). **երկիրը թեթևացավ** (454). **սերը թաշկինակ դարձնել, կապել աչքներին** (433). **ծամած ծամոն դարձնել ու թքել** (73). **կաթի մեջ մաղձ ծորալ** (171). **գործից անտղամարդ ելնել** (74). **բուկն ուռչել**

(252). **յոթ քրտինք փոխել** (415). **յուղած ու փափուկ** (133). **անգործությունից բուղա կտրել** (38). **նրա մեջ խաղաց իր ցեղի կարոտը** (166):.

Ժողովրդական մտածողությանը հարազատ նորակազմությունների մեջ շատ են նաև հաղորդակցական արժեք ունեցող դարձվածքները, դարձվածային կապակցություններն ու արտահայտությունները: Դրանցից շատերի լեզուն, ոճը, մտածողությունը այնքան են հագեցած ազգային գույներով, որ ստանում են «հավաքական» արժեք:

Կնկա յորք եք, ով ձեռը մեկնում է՝ չէ ասել չունեք (192): Ծաղկած ծառին էլ գնաս՝ ... կչորանա (396): Որբի կաշին հասար է լինում (446): Ամեն մարդ իր ամոթն է տանելու (362): Իմ լեզուն իմ թշնամին է (375): Խիղճը գազանի մեջ է գեղեցիկ (450): Փալաս մարդու խիղճը փսլնքոտ է (450): Երկրի երեսին ման գալու ապրանք չենք (196): Ծեծում ես, զրկում ես, մորթում ես՝ եզն անմոռնչ կանգնած է (442): Բողկ է՝ կերել էր (454): Վանքեր ընկույզ կտրես ապամով՝ Հաղպապ կլսվի (449): Ոչ ծնել ես, ոչ սնել (352): Տղա ուզիր, որ քեզ ուրի (264): Ոչնչի պետք չի լծի կենտր եզը (367): Ով հացվոր՝ իրենք հաց (455): Ով կացնավոր՝ իրենք ծառ (455): Ով լծող՝ իրենք լծկան (455): Ձեր փորում տղամարդու սի՞րտ է, թե՞ սազը ծեռին աշուղ (432): Սրանում է բուռ-բուռ, ծախսում է բուռ-բուռ (342):

Այս խմբում կան նաև դարձվածքներ, որոնք խոսակցական լեզվում գործածական են, սակայն բառարաններում չեն հանդիպում:

Ճակատը ծաղիկ հորթ (380), պարապ մարդկանց գրույց (377), երեխայի բեռ (406), խոսքը բերանից իլել (73), խոսքին արանք չկար (198), հացը չէր ուրվում (348), բեռը՝ իրենց, քրտնահոտը՝ տիրոջը (432), մահը կույր է լինում (450), ծնողի խոսքը օրենք է (414), գարնան ճուրղ ուրուրինն է, աշնանը՝ մերը (378), մտածիր աշխարհի բանը (308), աշխարհը կտոր-կտոր եղավ (170) և այլն:

«Ծառերում» հեղինակային նորակազմությունների **երկրորդ խումբը** գրքային ոճի դարձվածքներն են:

Կույր քարի պես գլորվել (456), շունչը կտրելու պես գեղեցիկ (291), դուրս չէր կանչել տղայության կեղևից (274), արդարությունը կոխկրտում են (210), մնում է իր կեղևի մեջ (31), բարի ավանակներ (328), վկայական ունեցող ավանակներ (411), աշխարհի զոհասեղան (6), անապատի պես ուրի տակից փախչող երկիր (309), բարձախեղդ լինել (300), քաղաքակրթության լաբիրինթոս (22), գեներալները չեն սպանում գեներալներին (321), դռան տեղն էլ գիտի, պատուհանի տեղն էլ՝ մեկից դուրս ես գցում, մյուսով է մտնում (347), մարդկության էգ մարմինը ործի կարիք է զգում (124), այսօրվա կոպեկը վաղվա հազարի հետ չի կարելի փոխել (378), ինչպե՞ս փոխեմ իմ ախտավոր ոչխարը օտար գազանի հետ (335) և այլն:

Գրքային ոճով դարձվածային նորակազմությունների մեջ կան նաև գեղարվեստորեն ոչ հաջողված կառույցներ:

Ջարմանքի կես բացականչության պես շար էին հարուստների միլիոնները (20): Յանկացավ այրականորեն հանդարտ նավարկություն դեպի Չգոյի խաղաղ ջրերը (156): Պարապ ուղեղով ունկնդրում էր ցավը (212): Լուծի պես նրա հոգու մեջ ինչ-որ բան էր խառնվում (13): Հալվելու չափ ուրախացավ (37): Անմարտության չափ ուրախ լինել (323): Սրբած թրի նման դուրս է քաշում ... հին հաշիվները (434): Արու խնդրող էգ վագրի պես (16): Բերանով բամբակ էր ժայթքում (33): Հմայիլի աղոթքով փափկեցնում է մարդու ժանիքները (329):

Նման նորակազմությունները «Ծառերում» չնչին մաս են կազմում և էական դեր չեն խաղում հեղինակի լեզվի և ոճի ամբողջական պատկերի գնահատման մեջ:

Հրանտ Մաթևոսյան գրողը, իրականում, բարդ երևույթ է, հար և նման իր հայրենի լեռնաշխարհին՝ հախումն, հորդահոս, գահավիժող, միաժամանակ հանդարտ, խաղաղ ու քնարական, որը մերթ կարող է «շունչ կտրելու չափ գեղեցիկ» պատկերներ կերտել, մերթ իմաստասերի հանդարտությամբ «մտածել աշխարհի բանը»: Նրա լեզվամտածողությունը մեր ժողովրդի խառնվածքի հայելին է, որի ամենադիպուկ բնութագիրը կարելի է տալ իր իսկ խոսքերով. «Մարդ չպիտի էնքան քաղցր լինի, որ կուլ տան, չպիտի էնքան դառը լինի, որ թքեն»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Թամրազյան Հր.**, Գրական դիմանկարներ, Եր., Հայաստան, 1975. - էջ 155:
2. **Բեդիրյան Պ.**, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., Լույս, 1973. - էջ 98:
3. **Մաթևոսյան Հրանտ**, Ծառերը (վիպակների ժողովածու), Եր., Սովետական գրող, 1978. - 457 էջ:
4. **Եզեկյան Լ.**, Հրանտ Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Եր., Երևանի համալս. հրատ., 1986. - էջ 50:

Л.У. АЙРАПЕТАН

ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ НЕОЛОГИЗМЫ В СБОРНИКЕ ГРАНТА МАТЕВОСЯНА «ДЕРЕВЬЯ»

Анализируются фразеологические неологизмы из сборника «Деревья» (фразеологизмы, фразеологические сочетания и выражения), которые построены на основе известных фразеологизмов в разговорном и книжном языке по принципу аналогии, антонимии и синонимии.

Ключевые слова: фразеологизм, неологизм, разговорный язык, диалект, литературный стиль, фразеологический синоним, фразеологический антоним, фразеологический аналог.

L.U. HAYRAPETYAN

PHRASEOLOGICAL NEOLOGISMS IN HRANT MATEVOSYAN'S
COLLECTION OF STORIES "THE TREES"

The phraseological neologisms (phraseological units, phraseological expressions), in the collection of stories "The Trees" by Hrant Matevosyan coined on the basis of phraseological expressions used in spoken and literary languages by the principle of analogy, antonymy and synonymy are analyzed.

Keywords: idiom, neologism, spoken language, dialect, literary style, phraseological synonym, phraseological antonym, phraseological analog.

ՀՏԴ 811.19'161.1'111:159.922.2

Հ.Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ, ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ
ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ,
ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Դիտարկվում է բնության երևույթ և առարկա անվանող բաղադրիչներով դարձվածալին միավորների ծագման աղբյուրների բազմազանությունը հայերենում, ռուսերենում և անգլերենում: Ներկայացված են տվյալ լեզվին հատուկ դարձվածքներ, փոխառված, թարգմանված և հեղինակային ծագում ունեցող դարձվածային միավորներ, որոնք վկայում են տարբեր ժողովուրդների աշխարհընկալման և լեզվամտածողության յուրահատկությունների մասին:

Առանցքային բառեր. դարձվածային միավոր, դարձվածքի ծագում, սկզբնաղբյուր, մշակութային արժեք, իմաստային համարժեքություն, ազգային յուրահատկություն:

Ներածություն: Մտածողության և կենսափորձի զարգացման հետ մարդը բառերին նոր իմաստներ է տվել ու իր մտքերն ավելի արտահայտիչ, տպավորիչ դարձնելու նպատակով կազմել է այնպիսի բառազուգորդումներ, որոնց բաղադրիչները հանդես են գալիս փոխաբերական իմաստներով, և բառակապակցությունը ձեռք է բերում նոր իմաստ: Վերաիմաստավորված բառակապակցությունը՝ դարձվածքը, կիրառվում է մարդուն, առարկաներն ու իրավիճակը բնութագրելու, խոսքի ուժն ազդեցիկ և պատկերավոր դարձնելու նպատակով: Դարձվածքների առաջացումը կապված է արտաքին աշխարհի առարկաների ու երևույթների ընկալման հետ, և զարմանալի չէ, որ տարբեր ժողովուրդներ համանման երևույթների վերաբերյալ տարբեր դարձվածքներ են կազմել, որոնցում արտացոլվում են տվյալ ժողովրդի կյանքն ու մշակույթը, պատմությունը, բնակլիմայական և կենցաղային պայմանները, հոգեբանությունը, ազգային ինքնատիպությունն ու ժողովրդի մտածողության յուրահատկությունը: